980

19 հոկտեմբերի 2018թ.

ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 384064/16

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 21918 գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ 19.10.2018թ. թիվ 21918 արձանագրությունը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

«Հունայկա» ՍՊԸ /ՀՎՀՀ 06405849/ տնօրեն Դավիթ Էդվարդի Սիրադեղյանը /հասցե՝ ք. Վանաձոր, Ներսիսյան թղմ. 11/35, նույն. քարտ 007283088, ՀԾՀ 2905830148/ համաձայն ՀՀ ՊԵԿ ՓՀՎ ՀՏ-Վարչության 28.09.2018թ. թիվ 4106573 ակտի՝ առանց ՀՀ օրենսդրությամբ նախատեսված աշխատանքի ընդունման պահանջները բավարարող աշխատանքային պայմանագրի պահել է թվով (1) մեկ վարձու աշխատող, որի համար նախատեսվում է պատասխանատվություն ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169^5 հոդվածի 1-ին մասով:

Կողմը չի ներկայացել վարչական վարույթին: Գործում առկա չեն բացատրություններ, լրացուցիչ ապացույցներ և միջնորդություններ: Դավիթ Էդվարդի Սիրադեղյանը վերջին մեկ տարվա ընթացքում չի կատարել նման իրավախախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244^2, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169^5 հոդվածի 1-ին մասի՝ Դավիթ Էդվարդի Սիրադեղյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 50.000 դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՎԱՀԵ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտավորության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն ածի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարներին. **900005240487՝** տուգանքի **70%, 900013000246՝** տուգանքի **30%** վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:
Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնակցեցի գործի քննությանը, որոշման վերաբերյալ առարկություններ չունեմ _____

(ստորագրություն)

Ստացա որոշման պատճենը_____